

գիտեմ յորմէ՛ տոհմէ, յերկրորդում ամի գժտութեանն (1208), որ տեսեաց այլ եւս ամս երկուս կամ երիս, մինչեւ մեռաւ կաթողիկոսն Դաւիթ: Յայնժամ, զի մի՛ վերստին գայթակղութիւն լիցի՝ նորոյ կաթողիկոսի ընտրութեամբ, փութացաւ իբրեւ հրեշտակ խաղաղութեան՝ խաղաղեալն այնու սիրով՝ ՚ի մենարանի Դրագարկու, եւ հայր տեղոյն՝ Հեթում-Հեղի, չոգաւ նախ առ համշիրակ իւր (կաթողիկոսն) ՚ի Հոռոմկլայն, եւ համբոյր բարուքն եւ բանիւք՝ ամոքեաց զանուանեալն Մեծաբարոյ. ապա եկն առ Լեւոն, նոյնպէս յաղթեաց բազմաց յաղթողին. եւ արար հաշտութիւն ՚ի միջի նոցա, փաստս փարելիս եւ պայմանս ինչ երկուստեք պահանջեալ, որպէս երեւի. քանզի Լեւոն անդէն եւ անդ հրամայեաց հանել զԿոմարտիասսն արգելեալս ՚ի բանտին՝ զքեռորդիս կաթողիկոսին, յորոց երէցն եւ յառաջադէմ Կոստանց՝ անդէն վախճանեալ էր, թերեւս եւ Հեռի հայր նոցա, զի ոչ յիշի ընդ Ճօսլինի եւ Պալտինի արձակելոցն. այլ առ ժամանակ մի չէտես զերեսս կաթողիկոսին, մինչեւ ՚ի գալ ամին՝ կատարեալ սէր եղէւ ընդ նոսա, ասէ պատմիչն. «Եւ դարձոյց (թագաւորն) զամենայն աւանս եւ զինչս՝ զոր առեալ էր ՚ի կաթողիկոսէն. եւ ուրախացան յոյժ հեռաւորք եւ մերձաւորք»:

Դ. Չաքարէ Սպասալար եւ Լեւոն

Մինչ չեւ էր հաշտութեանն եղեալ՝ առ կենդանեաւ Դաւթի կաթողիկոսի դէպ եղէւ խնդիր մի եկեղեցական, յոր մխեցան երկոքին եւս կաթողիկոսունքն. Դաւիթ ըստ եկեղեցական տեսութեան, Յովհաննէս՝ յաւետ ըստ քաղաքականին, խորագիտութեամբ իւրով: Այս դէպք ՚ի հանդէս հանեն զայլ ոմն ՚ի քաջանշան ազգայնոց ժամանակին, նաեւ զբաջն ՚ի քաջաց, թէպէտ տեղեաւ արտաքոյ եւ հեռի ՚ի սահմանաց իշխանութեան Լեւոնի, այլ համբաւով կցորդակից եւ մտերիմ, եւ արժանաւորք երկոքին առ երի կալոյ իրերաց. որոց եթէ տուեալ էր բաղդի՝ միանգամայն ՚ի միում ընդարձակ ասպարիզի նահատակել միով դիտմամբ, թերեւս հրաշափառագոյն հանուրց հանդիսանայր յայնժամ Հայաստան աշխարհ: *Չաքարիա Սպասալարն* մեծ էր այրն այն. առաջին պաշտօնեայ գերահոջակ եւ գեղապանձ թագուհւոյն Վրաց Թամարայ, սուսեր եւ վահան ամենայն Կովկասու եւ վերին տանն Հայոց: Գրեաթէ ՚ի միում ժամանակի երկոքին անզուգական արքս, Լեւոն եւ Չաքարէ, հանդիսանային մեծամեծ գործովք յերկուս ծագս թատեր հայկական աշխարհի. Լեւոն՝ նոր կանգնելով թագաւորութիւն եւ գրեաթէ նոր աշխարհ յարդարելով Հայոց. Չաքարէ՝